

ղիերէն. իսկ զրոյցն անցած է ուրիշներու
 ալ¹: Հեթում Համշէնը «աչօք իմովք» տե-
 սած կ'ըսէ, եւ իրօք իւր երկար ուղեւորու-
 թեանց ատեն մօտերէն անցած ըլլալու է:
 Այս իրականին «այնչափ մտռախլապատ»
 երկիրը՝ կ'ըլլայ «խաւարչուտ», այնպէս որ
 ոչ ոք բան մը կրնայ տեսնել եւ հոն մտնողն
 այլ եւս «ոչ գտանէ շաւիղ դառնալոյ»:
 Ասոր կը կցուի ուրիշ իրր պատմական զրոյց
 մը, որ «ընթերցեալ գտանի ի Պատմու-
 թիւնս թագաւորութեանց Հայոց եւ Վրաց»:
 Կը թողունք զրոյցի քննութիւնը. բայց
 միւսին պատճառը մեկնելի է: Ժովակողման
 այս ձորերը իրօք յաճախ մշուշապատ են.
 եւ Պոնտական հսկայ լեռնագիծը պատուար
 մըն է Սեւ-Ժովու ամպերու եւ մշուշներու
 որոնք կը նստին ձորերու վրայ: Բոյս ալ
 գեղեցիկ նկարագրած է Համշէնի կուսական
 անտառներն եւ յաճախ միգամած խոր հո-
 վիտները, ուր՝ յաճախ պարզ առաւօտէ
 հաքը՝ կ'էսորին մօտերը կը լողան ամ-

¹ Հմմտ. Recueil des Historiens de Croisades.
 Documents Arméniens. Tome II. Documents latins
 et français relatifs à l'Arménie, ed. Ch. Kohler,
 Paris 1906. Ետկ. Introduction p. XXIV, եւ բնագիր,
 p. 129—130. 268—269: